600.0009.20.02.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2002 թվականի №9
ք.Երևան

«Նարեկ-Լ.Կ.» ՍՊԸ-ի փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը և 59-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Նարեկ-Լ.Կ.» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ցեմենտի գործարանի տեխնիկական ջրատարի վրա կառուցված փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 19.506 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 16.255 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:

2. «Նարեկ-Լ.Կ.» ՍՊԸ-ի փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի 2002 թվականի քվոտան սահմանել 3.96 մլն կՎտժ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի մարտի 20-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**